ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ Ա Ն Ր Ա Ք Վ Ե

6 դեկտեմբերի 2015թ.

Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Հարգելի մասնակից

Հանրաքվեի քվեարկությունը տեղի կունենա

2015 թվականի դեկտեմբերի 6-ին:

Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոններում՝ քվեարկության օրը ժամը 8:00-ից մինչև 20:00-ն:

Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացին քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է:

Քվեարկության կարգը տեղամասային կենտրոնում

Քվեարկությանը ներկայացած քաղաքացին պետք է գրանցվի ներկայացնելով անձնագիր կամ նույնականացման քարտ կամ անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ:

Գրանցվելու համար հանձնաժողովի անդամը ստուգում է Ձեր ինքնությունը և ցուցակում լրացնում Ձեր անձը հաստատող փաստաթղթի տվյալները, որից հետո Դուք պետք է ստորագրեք այդ տվյալների դիմաց: Եթե Դուք չեք կարող ինքնուրույն ստորագրել, ապա Ձեր համաձայնությամբ, Ձեր փոխարեն կարող է ստորագրել այլ քաղաքացի, որը չպետք է լինի հանրաքվեի հանձնաժողովի անդամ:

Այնուհետև Դուք ստանում եք քվեաթերթիկ և քվեարկության ծրար: Քվեաթերթիկը տեղավորվում է քվեաթերթիկին համապատասխանող կաղապարում:

Ձեր ցանկության դեպքում՝ Ձեզ օգնելու իրավունք ունեցող քաղաքացին, Ձեզ համար կկարդա քվեաթերթիկում նշված տվյալները: Դուք շոշափելով կգտնեք կաղապարի համապատասխան դատարկ անցքը և ինքնուրույն V ձևի նշում կկատարեք քվեաթերթիկում, որից հետո քվեաթերթիկը հանեք կաղապարից, ծալեք և ինքնուրույն կամ Ձեզ օգնելու իրավունք ունեցող քաղաքացու օժանդակությամբ այն տեղավորեք քվեարկության ծրարում:

✓Քվեաթերթիկը լրացնելու և քվեարկության ծրարում տեղավորելու համար

Դուք հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո իրավունք ունեք քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ կամ դիտորդ:

Եթե կարծում եք, որ քվեաթերթիկը սխալ եք լրացրել կամ վնասել եք, ապա կարող եք դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:

Քվեարկելուց հետո մոտենում եք քվեատուփին:

- ✓Եթե Դուք քվեարկությանը մասնակցում եք անձնագրով, ապա հանձնաժողովի անդամը ստուգում է հանրաքվեին մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը և դրա բացակայության

դեպքում դրոշմակնքում Ձեր անձնագիրը.

- ✓ եթե Դուք քվեարկությանը մասնակցում եք նույնականացման քարտով, ապա հանրաքվեին մասնակցելու վերաբերյալ դրոշմակնիքի բացակայությունը չի ստուգվում, իսկ նույնականացման քարտը չի դրոշմակնքվում,

այնուհետ ծրարը դնում եք համապատասխան աշխատասեղանին և հանձնաժողովի անդամը՝ առանց ծրարը ձեռքը վերցնելու, բացելու և ստուգելու կնիք է դնում ծրարի ցանկացած կողմում, բացում է քվեատուփի ճեղքը և հնարավորություն ընձեռում քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու համար:

Ուշադրություն.

Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե քվեարկության մասնակիցն ինչպես է քվեարկում: